ՀԱԴՎԱԾՆԵՐ

ԼԵՆԻՆԸ ԵՎ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

Զարգացնելով սոցիալիստական հեղափոխության մարքսիստական ուսմունքը, Վ. Ի. Լենինն ապացուցեց, որ իմպերիալիզմի դարաշրջանում պարտադիր չէ, որպեսզի հեղափոխությունները տեղի ունենան միայն զարգացած կապիտալիստական երկրներում։ Իմպերիալիստական համապարփակ շղթան կճեղքվի այնտեղ, որտեղ օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալներ կստեղծվեն դրա համար։ Ուստի սոցիալիստական հեղափոխությունը սկզբում կարող է հաղթանակել մի քանի կամ նույնիսկ մեկ առանձին վերցրած երկրում։ Այդ հաղթանակի հիմնական պայմաններից մեկը Լենինը համարում էր բանվորների և գյուղացիների դաշինքը։ Սոցիալիստական հեղափոխության լենինյան ուսմունքի մեջ կարևոր տեղ է հատկացվում գյուղացիությանը, որը գաժանորեն շահագործվում, անընդհատ քայքայվում և իր սոցիալական վիճակով դառնում է բանվոր դասակարգի հավատարիմ դաշնակիցը։

Վ. Ի. Լենինը իր հեղափոխական գործունեության հենց սկզբից հատուկ ուշադրություն էր դարձնում գալիք հեղափոխության մեջ պրոլետարիատի դաշնակիցների հարցին։ Նրա առաջին աշխատությունը «Տնտեսական նոր շարժումներ գյուղացիական կյանքում» (1893 թ.) Ռուսաստանում ագրարային հարցի ուսումնասիրությանն է նվիրված։

Ռուսաստանի պատմական զարգացման առանձնահատկություններից մեկն այն էր, որ դարասկզբից նա տառապում էր ոչ թե կապիտալիստական հարաբերությունների զարգացման պատճառով, այլ, ընդհակառակը, կապիտալիզմի թույլ զարգացման և միջնադարյան ֆեոդալական սիստեմի տիրապետման հետևանքով։ Այդ իսկ պատճառով, ի տարբերություն արևմտյան երկրների, Ռուսաստանի հետագա զարգացման համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներից մեկը՝ ագրարային-գյուղացիական հարցն էր։ Վ. Ի. Լենինը ռուս մարքսիստներից առաջինն էր, որ մշակեց ագրարային-գյուղացիական հարցի կուռ և գիտական տեսություն։

Ուսումնասիրելով իմպերիալիզմի դարաշրջանի Ռուսաստանի սոցիալ-տնտեսական պայմանները, Լենինը ցույց տվեց, որ գալիք հեղափոխական բախումների ժամանակ պրոլետարիատը հանդես կգա ոչ թե միայնակ, ինչպես պնդում էին երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիստները, այլ իր դասակարգային դաշնակիցների հետ միասին։ Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ բանվոր դասակարգը հանդես կգա դաշնակցած ամբողջ գյուղացիության հետ՝ ընդդեմ միապետության, իսկ սոցիալիստական հեղափոխության ժամանակ՝ չքավոր գյուղացիության հետ՝ ընդդեմ բուրժուազիայի։ Դրանով Լենինը միաժամանակ հերքեց նաև հեղափոխության մեջ գյուղացիության դերը

թերագնահատողների այն սխալ պնդումը, թե պրոլետարիատը կարող է իշխանությունը վերցնել և պահել միայն այն երկրում, որտեղ նա կազմում է բնակչության մեծամասնությունը։

Այսպիսով, մշակելով գյուղացիության նկատմամբ պրոլետարիատի հեղափոխական տակտիկան ու ստրատեգիան, Վ. Ի. Լենինը դրանով իսկ ագրարային հարցի լուծումը կապեց պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ և ցույց տվեց գյուղացիական դեմոկրատական շարժումը պրոլետարիատի քաղաքական պայքարին միացնելու ուղիները։ Ռուսական երեք հեղափոխությունները փայլուն կերպով հաստատեցին ագրարային-գյուղացիական հարցի լենինյան տեսության ճշմարտությունն ու կենսունակությունը։

«Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթանակեց այն պատճառով,— գրված է ՍՄԿԿ պատմության մեջ,— որ Ռուսաստանում ստեղծված է հասարակական ուժ՝ պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը, որ ճկմեց մեռնող դասակարգերի դիմադրությունը»[1]։

Կոմունիստական կուսակցության ագրարային՝ հստակ ու բազմակողմանի մշակված ծրագրի ստեղծումը Վ. Ի. Լենինի մեծագույն ծառայությունն է։ Հողի ազգայնացումը, որը հռչակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը՝ գյուղատնտեսությունը նոր, սոցիալիստական ուղիով զարգացնելու հիմքն էր, իսկ կալվածատիրական, վանքապատկան և այլ հողերի բռնագրավումն ու բաշխումը կարևոր նախադրյալ էր գյուղացիությանը սոցիալիստական հեղափոխության կողմը նվաճելու գործում։ Ջնայած հողաբաժանման հետևանքով ամրապնդվում էին մանր-գյուղացիական տնտեսությունները, բայց Լենինը դրա վրա նայում էր, որպես ժամանակավոր երևույթի և պահանջում էր, որ կուսակցությունը ձեռք առնի բոլոր միջոցները այդ տնտեսությունների վիճակը բարելավելու, նրանց արտադրությունը բարձրացնելու համար, մինչև գյուղացին իր փորձով համոզվի խոշոր տնտեսություններ հիմնելու անհրաժեշտության մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ գյուղացիությունը աղատագրվեց կալվածատերերի և վաշխառուների շահագործումից և պատմության մեջ առաջին անգամ անվճար հող և արտադրության այլ միջոցներ ստացավ։ Շատ կարևոր էր այն հանգամանքը, որ այդ բոլորը ստացավ քաղաքական իշխանությունը նվաճած բանվոր դասակարգի կողմից։ Հոկտեմբերի ամենածանր օրերին Լենինի կողմից ագրարային-գյուղացիական հարցի՝ հեղափոխության ամենաբարդ հարցերից մեկի վարպետորեն լուծելու պատմական փորձը՝ մարքսիստական տեսության փայլուն կենսագործման օրինակ է հանդիսանում։

Վ. Ի. Լենինը դեռևս իր վաղ շրջանի աշխատություններում ցույց էր տվել հողագործության մեջ խոշոր, հանրային տնտեսություններ ստեղծելու անհրաժեշտությունը։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կուսակցության առջև կանգնեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և աշխատավոր գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու պրոբլեմը։ Մինչ այդ մշակվել էր հարցի տեսական կողմը միայն։

Գյուղում սոցիալիստական հեղափոխության զարգացման պրոցեսը արտակարգ բարդ պայմաններում էր ընթանում։ Ջնայած գյուղացիությունն ամբողջությամբ վերցրած պաշտպանեց սոցիալիստական հեղափոխությունը, սովետական իշխանության առաջին ագրարային միջոցառումներից հետո էլ կու-

---

1 ՍՄԿԿ պատմություն, Երևան, 1959, էջ 295։

լակությունը դեռևս զգալի դիրք ուներ գյուղում և ամեն կերպ արգելակում էր կուսակցության ագրարային ծրագրի հետևողականորեն կենսագործմանը։ Միայն բատրակներն ու չքավորներն էին շահագրգռված հեղափոխական վերափոխումները մինչև վերջ հասցնելու մեջ։ Ուսումնասիրելով Ռուսաստանում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, Վ. Ի. Լենինը ողջունեց կուլակության դեմ 1918 թ. կազմակերպված չքավորական կոմիտեների գործունեությունը և նշեց, որ դա այն օղակներից մեկն է, որոնց օգնությամբ սովետական իշխանությունը պետք է ուղի հարթի գյուղում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար։ Տեղական սովետների հետ մեկտեղ չքավորական կոմիտեները գյուղական պրոլետարիատի դասակարգային, հեղափոխական կազմակերպություններն էին։ Վ. Ի. Լենինը նշում է, որ չքավորական կոմիտեների հանդես գալը «մի քայլ է, որը իրենից ներկայացնում է մեր պարենային քաղաքականության ամբողջ հիմքը և միաժամանակ հանգիսանում է հսկայական կարևորություն ունեցող բեկման կետ մեր հեղափոխության զարգացման ամբողջ ընթացքում և նրա իրականացում։ Այդ քայլով մենք անցանք այն սահմանը, որով բուրժուական հեղափոխությունը բաժանվում է սոցիալիստականից, որովհետև միայն բանվոր դասակարգի հաղթանակը քաղաքներում և միայն բոլոր ֆաբրիկաների անցումը պրոլետարական պետության ձեռքը, այս ամենը ի վիճակի չեն լինի ամրապնդել և ստեղծել սոցիալիստական հասարակարգի հիմքերը, եթե մենք գյուղում մեզ համար չստեղծեինք նաև ոչ թե համագյուղացիական, այլ իսկապես պրոլետարական հենարան»[2]։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ չքավորական կոմիտեները խոշոր դեր խաղացին դեպի սովետական իշխանությունը միջակ գյուղացիության շրջադարձի գործում և հետագայում Լենինի առաջարկով ձուլվեցին տեղական սովետներին։

Հիմնական դասակարգերը՝ պրոլետարիատն ու գյուղացիությունը շահագրգռված էին սոցիալիզմի շինարարությամբ։ Ուստի անհրաժեշտ էր մշակել դրանց փոխհարաբերությունը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։ Գյուղացիության նկատմամբ ճիշտ կուրս մշակելու գործում բացառիկ նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի կողմից տրված գյուղացիության սոցիալական խմբերի գիտական բնութագիրը, ճիշտ կերպով կողմնորոշեց բանվոր դասակարգի վերաբերմունքը գյուղացիական տարբեր շերտերի նկատմամբ և կուսակցությունը հենվելով դրա վրա՝ սոցիալիստական հեղափոխության զարգացման տարբեր էտապների համար մշակեց պրակտիկ միջոցառումներ և հետևողական պայքար ծավալեց դրանց կենսագործման համար։

Վ. Ի. Լենինի պահանջով կուսակցության VIII համագումարի կողմից ընդունված ծրագրում հատուկ նշվեց, որ Ռուսաստանի կոնկրետ, պատմական պայմանները և հեղափոխության զարգացման շահերը պահանջում են՝ որպեսզի քաղաքական իշխանությունը վերցրած պրոլետարիատը կարողանա իր դասակարգային քաղաքականությունը անցկացնել գյուղում՝ պետք է ամուր հենվի չքավոր գյուղացիության վրա, դաշինք կնքի միջակի հետ և աստիճանաբար սահմանափակի, ապա և դուրս մղի կուլակությունը հասարակական-քաղաքական կյանքից։ Այս լողունգով կուսակցությունը կազմակերպեց աշխատա-

---

2 Լ ե ն ի ն, Երկեր, հ. 28, էջ 506—507։

վորության պայքարը և խոշոր հաջողությունների հասավ գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։

Գյուղի և քաղաքի միջև տնտեսական ճիշտ հարաբերությունների սահմանումը և բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդումը միշտ եղել են կոմունիստական կուսակցության ուշադրության կենտրոնում։ Սոցիալ-տնտեսական ամեն մի խոշոր երևույթից հետո կուսակցությունը նոր միջոցառումներ է մշակել այդ դաշինքի էլ ավելի ամրապնդման համար։ Քաղաքացիական կռիվները հաղթականորեն ավարտելուց հետո անհրաժեշտ էր նոր միջոցառումներ մշակել գյուղի և քաղաքի հարաբերությունները նորմալ հունով զարգացնելու համար։ Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որը թելադրվել էր տվյալ կոնկրետ, պատմական պայմանների բերումով, այլևս չէր արդարացնում իրեն և աշխատավոր գյուղացիությունը իրավացիորեն սկսել էր դժգոհել դրանից։ Ահա այս պայմաններում, ամենայն ուշադրությամբ հետևելով երկրում կատարվող տեղաշարժերին, Վ. Ի. Լենինը մշակեց նշանավոր նոր տնտեսական քաղաքականությունը (Նէպ), որը շրջադարձային նշանակություն ունեցավ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերելքի և մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում։ Նէպ-ը, որպես կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանի քաղաքականություն, ի տարբերություն ռազմական կոմունիզմի, իր հիմնական գծերով պարտադիր էր բոլոր երկրների համար։ Ամենից առաջ դա անհրաժեշտ է, որպեսզի պայմաններ ստեղծվեն սոցիալական նոր ուժերի ձևավորման համար, որոնց շնորհիվ պետք է կենսագործվեն սոցիալիստական հասարակարգի կառուցման վիթխարի պլանները։ Սովետական պետության տնտեսական նոր քաղաքականությունը հետապնդում էր այն նպատակը, որ գյուղացիությունը լայնորեն ընդգրկվի սոցիալիստական շինարարության մեջ, առանց որի հնարավոր չէ անցումը կապիտալիզմից սոցիալիզմին, գյուղի և քաղաքի միջև ամրապնդվեն առևտրական ու արտադրական կապերը և այդ բոլորի հիման վրա վերականգնվի քայքայված ժողովրդական տնտեսությունը։

Անբեկանելի է Լենինի հետևողական պայքարը նոր տնտեսական քաղաքականությունը մտցնելու համար և նրա հակառակորդների մեղադրանքները՝ կապիտալիզմի հանդեպ նահանջելու, կապիտալիզմ վերականգնելու, ապրանքադրամային հարաբերությունները արմատավորելու և այլ հարցերում։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ համարձակորեն պետք է օգտվել այն բոլոր լծակներից, որոնք այս կամ այն չափով նպաստում են մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցմանը։ «...Տնտեսապես անցումնային շրջանում,— գրում էր Լենինը,— բոլոր և ամեն տեսակի ձևերից թույլատրելի է օգտվել և հարկավոր է օգտվել կարողանալ, եթե այդ անհրաժեշտ է պրոլետարիատի հետ գյուղացիության կապն ամրապնդելու համար, քայքայված ու տանջված մի երկրում ժողովրդական տնտեսությունն անհապաղ աշխուժացնելու համար»[3]։

Նէպ-ը կոչված էր գյուղատնտեսական արտադրությունը բարձրացնելու և աստիճանաբար խոշոր, սոցիալիստական արտադրության ոլորտը փոխադրելու անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար։ Իսկ դա կարող էր կատարվել մեքենայական ամուր բազայի և համատարած էլեկտրիֆիկացման շնորհիվ.

3 Լենին, Երկեր, հ. 33, էջ 126։

որի զարգացման համար ունալ պայմաններ էին ստեղծվում նույնպես նոր տնտեսական բաղաքականության շնորհիվ։ Ուստի մանր գյուղացու սոցիալիստական վերափոխման, հոգերանության ու հակումների վերամշակման գործը Նէպ-ի պայմաններում ավելի հաջողությամբ էր կենսագործվում և դա միակ ճիշտ քաղաքականությունն էր քայքայված երկիրը վերականգնելու համար։ «Այս հարցը լուծել մանր հողագործի նկատմամբ, առողջացնել, այսպես ասած, նրա ամբողջ հոգերանությունը, կարող է միայն նյութական բաղան, տեխնիկան, տրակտորների ու մեքենաների կիրառումը հողագործության մեջ մասսայական մասշտաբով, էլեկտրիֆիկացիան մասսայական մասշտաբով»[4]։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման պրոցեսում, ամբողջ ժողովրդական տնտեսության վերելքի պայմաններում որոշ աշխուժացում ապրեցին նաև կապիտալիստական տարրերը։ Սրվեց «ով՝ ում» հարցը։ Վ. Ի. Լենինը հանճարեղորեն կանխորոշեց, որ չնայած բարդ և խճճված իրավիճակին, եթե իշխանությունը նվաճած պրոլետարիատը խելացիորեն օգտագործի տնտեսական լծակները, հարկային ու վարկային քաղաքականության ճիշտ կիրառմամբ ամեն կերպ սահմանափակի կապիտալիստական տարրերի զարգացումը, թուլացնի նրանց տնտեսական դերը երկրի կյանքում և ֆինանսական ու այլ միջոցներով ամենօրյա օգնություն ցույց տալով նպաստի սոցիալիստական սեկտորի զարգացմանը՝ ահա այդ պարագաներում պայմաններ կստեղծվեն սոցիալիզմի հաղթանակի համար։ Նեպական Ռուսաստանը կդառնա սոցիալիստական Ռուսաստան, կանխատեսում էր Վ. Ի. Լենինը դեռևս 1922 թվականին։ Կյանքը լիովին հաստատեց այդ գիտական կանխատեսումը։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ իշխանությունը նվաճելուց հետո պրոլետարիատը առաջին հերթին բոլոր միջոցները պետք է մոբիլիզացնի գյուղատնտեսությունը զարգացնելու համար։ Սովահար երկիրը փրկելու հիմնական միջոցը գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումն էր։ Գյուղատնտեսության վերականգնմանն ուղղված կուսակցության գործնական միջոցառումները և նրանց առաջին տարիների արդյունքները՝ սոցիալիզմի գաղափարները գյուղացիության մեջ տարածելու ամենահզոր միջոցներն էին։ Ընդ որում երիտասարդ սովետական կառավարությունը օգնում էր ոչ միայն միավորված կոոպերատիվ տնտեսություններին, այլև մենատնտես գյուղացիներին։ Ելնելով գյուղատնտեսական արտադրության բարձրացման շահերից, Լենինի առաջարկով, ցանքատարածություններն ընդարձակող և գյուղատնտեսական կուլտուրաները բարձր որակով մշակող մենատնտես գյուղացիների համար սահմանվեց հատուկ պարգևատրություն։ Դա փաստորեն գյուղացիության նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու լենինյան սկզբունքի կիրառման առաջին քայլերից մեկն էր։ Հետագայում կուսակցությունն աշխատավոր գյուղացիությանը խրախուսելու մի ամբողջ սիստեմ մշակեց։

Նէպ-ի առաջին տարիներին ավելի ուժեղացավ գյուղացիության շերտավորումը, ավելի հստակորեն գծագրվեցին դասակարգային հարաբերությունները, ընդ որում նորից ուժեղացան միջակ գյուղացիության տատանումները, որն իր տնտեսական վիճակով հակվում էր դեպի կուլակությանը։ Դրա պատճառն այն էր, որ հիմնական շեշտը դնելով ժողովրդական տնտեսության՝ և առաջին հերթին գյուղատնտեսության արագ վերականգնման վրա, որոշակի

4 Լենին, Երկեր, հ. 32, էջ 266։

գիջումներ էր արվում գյուղացիությանը, որից առատորեն օգտվում էին ավելի ամրապնդված տնտեսությունները։ Եվ գյուղատնտեսությունը հիմնականում վերականգնելուց հետո կուսակցության առջև նորից ծառացավ միջակ գյուղացիություն նվաճելու խնդիրը։ Այժմ նրա համար պայքարում էին պրոլետարիատն ու կուլակությունը և հիմնականում միջակ գյուղացիության վերաբերմունքից էր կախված գյուղի հետագա զարգացման, ի վերջո, նաև սոցիալիստական շինարարության բախտը։ Ընդ որում տարբեր կարծիքներ էին հայտնվում գյուղում տեղի ունեցած տեղաշարժերի մասին. ոմանք թերագնահատում էին Նէպ-ի պայմաններում կուլակության և շահագործող մյուս խավերի ուժեղացումը, նման երևույթի դեմ որոշակի միջոցառումներ չձեռնարկելը հղի էր վտանգավոր հետևանքներով։ Մյուսներ՝ ընդհակառակը, գերագնահատելով այդ վտանգը, փաստորեն անտեսում էին բանվորա-գյուղացիական դաշինքի վիթխարի ուժը և չհիմնավորված միջոցառումների դիմելու կոչ էին անում։ Վ. Ի. Լենինը բազմակողմանիորեն քննարկելով գյուղում տեղի ունեցած փոփոխությունները, ճիշտ կերպով բնորոշեց յուրաքանչյուր սոցիալական շերտի տեղն ու զարգացման տենդենցները, ցույց տվեց, որ ժողովրդական տնտեսությունը վերականգնելու հետ մեկտեղ անհրաժեշտ է ավելի ընդգծել պրոլետարիատի դասակարգային քաղաքականությունը, հիմնականում հենվելով չքավոր գյուղացիության վրա, ամեն կերպ ամրապնդել դաշինքը միջակ գյուղացիության հետ։ Սա ստրատեգիական նշանակություն ունեցող այն հիմնաքարն էր, որի վրա հենվելով կուսակցությունը արմատապես վերափոխեց գյուղի սոցիալական դեմքը։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո երկրի էկոնոմիկայում ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ մի կողմից արդյունաբերությունը հենվում էր արտադրության միջոցների հասարակական սեփականության վրա, իսկ մյուս կողմից պահպանվում էին մասնավոր սեփականատիրական, մանր գյուղացիական տնտեսությունները։ Սոցիալիստական արդյունաբերությունը հագեցվում էր առաջավոր տեխնիկայով և արագ տեմպերով զարգանում, իսկ մանր գյուղացիական տնտեսությունները հնարավորություն չունենալով օգտագործելու առաջավոր տեխնիկան և խարսխված լինելով ձեռքի աշխատանքի վրա, զարգանում էին չափազանց դանդաղ տեմպերով։ Հասկանալի է, որ սոցիալիստական շինարարությունը մեր երկրում չէր կարող երկար ժամանակ խարսխվել երկու իրարամերժ հիմքերի վրա։

Ուսումնասիրելով հեղափոխությունից հետո երկրի էկոնոմիկայի այս հակասական կողմը և սոցիալիզմի կառուցման հեռանկարների հարցը, Լենինը հանգեց մանր գյուղացիական տնտեսությունների կոոպերացման գաղափարին։ «Եթե գյուղացիական տնտեսությունը կարող է էլ ավելի զարգանալ,— գրում էր նա,— անհրաժեշտ է հաստատուն կերպով ապահովել նաև հետագա անցումը, իսկ հետագա անցումն անխուսափելիորեն այն է, որ ամենաքիչ շահավետ և ամենաշատ հետամնաց, մանր, առանձնացած գյուղացիական տնտեսությունն աստիճանաբար միավորվելով կապմակերպի հանրային, խոշոր հողագործական տնտեսություն»[3]։ Լենինյան կոոպերատիվ պլանը խոշոր ներդրում էր գիտական կոմունիզմի տեսության մեջ։ Դա միջազգային նշանակություն ունեցող շատ կարևոր հայտնագործում էր, որով ցույց էր տրվում մանր

3 Լենին, Երկեր, հ. 32, էջ 362.

գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակման ուղին, հետևաբար գյուղում լայնորեն սոցիալիստական շինարարություն ծավալելու ուղին։ Նէպ-ի պայմաններում լենինյան կոոպերատիվ պլանն ուներ նաև խոշոր քաղաքական նշանակություն։ Այնտեղ միավորված չքավոր և միջակ գյուղացիները կազմակերպված պայքարելով կուլակության դեմ, սահմանափակում էին նրա շահագործողական և ուռճացման տենդենցը, մեծապես օգնելով պրոլետարիատի դիկտատուրային իր հիմնական խնդիրներից մեկի կատարման ղործում։

Պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո ամենադժվար խնդիրը մանր գյուղացիական արտադրության կոոպերացումն էր։ Դա հետևողական աշխատանք պահանջող խնդիր էր։ Սոցիալիստական հեղափոխությունից դեռևս շատ առաջ, մարքսիզմի հիմնադիրները գտնում էին, որ հեղափոխությունից հետո պրոլետարիատը պետք է օգնի գյուղացիներին՝ միավորվելու օրինակելի տնտեսությունների մեջ։ «Մանր գյուղացիների նկատմամբ մեր խնդիրը նախ և առաջ այն է,— գրում է Էնգելսը,— որ նրանց մասնավոր արտադրությունը և մասնավոր ունեցվածքը դարձնենք ընկերական, բայց ոչ թե բռնի ճանապարհով, այլ օրինակի և այդ նպատակի համար հասարակական օգնություն առաջարկելու միջոցով»[6]։ Զարդացնելով մանր գյուղացիական տնտեսությունները միավորելու և կոմունիստական վերադաստիարակության վերաբերյալ մարքսիզմի կլասիկների հիմնական դրույթները, Վ. Ի. Լենինը պրոլետարիատի դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը հոչակեց բանվորա-գյուղացիական դաշինքը։ Լենինը նշում էր, որ մանր գյուղացիներին «չի կարելի վոնդել, նրանց չի կարելի ճնշել, նրանց հետ հարկավոր է լեզու գտնել, նրանց կարելի է (և պետք է) վերափոխել, վերազաստիարակել միայն շատ երկարատև, զանգաղ, զգույշ կազմակերպչական աշխատանքով»[7]։ Սա լոկ տեսական թեզ չէր, այլ միլիոնների փորձից, պրակտիկայից բխող ընդհանրացում։ Կուսակցությունը,— սովորեցնում էր Լենինը,— պետք է ուսումնասիրի աշխատավորության փորձը իր բազմազան ձևերի մեջ և գտնի այն հարմար օղակը, որը բոլորից լավ կարող է նպաստել արտադրության վերելքին և որտեղ ամենից ճիշտ են զուգակցվում գյուղացիության անհատական և հասարակական շահերը։ Ինքը, Լենինը, մեծ ուշադրությամբ հետևում էր գյուղում տեղի ունեցող փոփոխություններին և ընդհանրացնելով միլիոնների փորձը՝ այն ներկայացնում էր կուսակցության ուշադրությանը։ Այսպես, տեղեկանալով, որ Պենզայի նահանգի գյուղացիները բռնագրաված կալվածատիրական գույքը չեն բաժանել իրար միջև, այլ դարձնելով հանրային սեփականություն, դրել են ընդհանուր օգտագործման, կուսակցության ապրիլյան կոնֆերանսում Լենինը պահանջեց բանաձևը լրացնել հատուկ կետով, որը մինչ այդ չէր նախատեսվել։

«Կուսակցությունը պետք է պաշտպանի գյուղացիական այն կոմիտեների նախաձեռնությունը, որոնք Ռուսաստանի մի շարք վայրերում կալվածատիրական կենդանի և մեռյալ ինվենտարը հանձնում են այդ կոմիտեներում կազմակերպված գյուղացիության ձեռքը՝ բոլոր հողերի մշակության համար հասարակականորեն կարգավորված ձևով օգտագործելու նպատակով»[8]։

---

6 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, 1950 թ., էջ 559—560։

7 Լենին, Երկեր, հ. 31, էջ 35։

8 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մաս I, Երևան, 1954, էջ 428։

Դեռևս Լենինի կենդանության ժամանակ, սոցիալիզմի հակառակորդները, որոնք չէին հավատում մեր երկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան ուսմունքին, ամեն կերպ նսեմացնում էին կոոպերացիայի դերն ու նշանակությունը։ Լենինը դրա դեմ անողոք պայքար էր տանում։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ գոյություն ունեն գյուղում խոշոր տնտեսություն ստեղծելու կապիտալիստական և սոցիալիստական ուղիներ, որոնք, նայած արտաքին նմանությանը, արմատապես տարբերվում են միմյանցից։ Կապիտալիստական խոշոր տնտեսությունները, սովորաբար, քայքայում և նոր թշվառություններ են բերում մանր արտադրողին։ Իսկ սոցիալիստական կոոպերացիան, որը բանվորական պետության օգնությամբ մանր գյուղացիական տնտեսությունների միավորումն է խոշոր մեքենայական բազայի վրա՝ մեկընդմիշտ ազատագրում է գյուղացիությանը շահագործումից ու աղքատացումից։ Բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր դաշինքի վրա հիմնված հասարակարգում, որտեղ իշխանությունը և արտադրության հիմնական միջոցները գտնվում են պրոլետարիատի ձեռքում, կոոպերացիան հանդիսանում է սոցիալիստական ձեռնարկություն, ուր առավել հաջողությամբ են զուգակցվում գյուղացու անձնական և հասարակական շահերը։ Ամփոփելով առաջին տարիների կոոպերատիվ շարժման փորձը, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ մեր երկրի գյուղատնտեսության զարգացումը և գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ ներքաշելու ուղին անցնում է կոոպերացիայի միջով։ Ընդ որում Լենինը խստորեն զգուշացնում էր, որ այդ խնդրում չպետք է շտապել կամ բռնություն թույլ տալ, այլ պետության կողմից ամեն տեսակի օժանդակություն առաջարկելով աստիճանաբար, օրինակի ուժով համոզվելու հնարավորություն պետք է տալ նրան։ «Այժմ մենք պետք է գիտակցենք և գործ դարձնենք այն, որ ներկայումս այն հասարակարգը, որին պետք է օժանդակեն սովորականից ավել՝ կոոպերատիվ հասարակարգն է»[9]։

Լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործման շնորհիվ, նախքան համատարած կոլեկտիվացումը, երկրում կազմակերպվեցին կոոպերացիայի պարզ ձևեր, որոնց ամրապնդումն ու զարգացումը նախապատրաստեց գյուղացիությանը՝ անցնելու կոոպերացիայի ավելի բարձր ձևերին։ Փաստորեն մինչև համատարած կոլեկտիվացումը սպառողական, վարկային և արտադրական կոոպերացիաների լայն ցանցի շնորհիվ միլիոնավոր գյուղացիներ աստիճանաբար ներքաշվեցին կոլեկտիվ աշխատանքի մեջ և մասնակից դարձան մեր երկրում սոցիալիստական շինարարությանը։ Դա անհրաժեշտ էտապ էր սոցիալիստական, նոր գյուղացիության ձևավորման, նրա մանր բուրժուական հոգեբանությունը կոլեկտիվիզմի հոգեբանությամբ վերափոխելու բարդ պրոցեսում։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը վիթխարի աշխատանք ծավալեցին լենինյան կոոպերատիվ պլանը կենսագործելու և միլիոնավոր մանր արտադրողներին կոլտնտեսությունների մեջ միավորելու համար։ Դա բավականին դժվար խնդիր էր։ 1929 թվականը բեկման տարի հանդիսացավ մեր երկրում սոցիալիզմ կառուցելու գործում։ Գյուղատնտեսության մեջ դա նշանավորվեց նրանով, որ կոլտնտեսությունը մտավ միջակը՝ գյուղի աղքատաբնակչության հիմնական մաս-

---

9 Լենին, Երկեր, հ. 33, էջ 558։

սան։ Լենինյան կոոպերատիվ պլանի հետևողական կենսագործման և բանվոր դասակարգի եղբայրական, անընդհատ օգնության շնորհիվ, գյուղացիությունը համոզվեց սոցիալիստական խոշոր տնտեսությունների շահավետության մեջ և իր բախտը անվերադարձ կապեց սոցիալիզմի հետ։ Իրագործվեց համատարած կոլեկտիվացումը։ Դա ՍՍՀՄ գյուղատնտեսության մեջ կատարված ամենախոր հեղաշրջումն էր, որը փոխեց գյուղի արտադրական հիմքը և զարգացման տենդենցը. «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տընտեսության՝ մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ։

...Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»[10]։ Գյուղում վերացվեցին կապիտալիստական արտադրական հարաբերությունները և հաստատվեցին նոր, սոցիալիստական հարաբերություններ։ Կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ սովետական իշխանության հաստատուն հենարանը գյուղում։ Լենինյան կոոպերատիվ պլանի հաղթանակով մեկընդմիշտ լուծվեց «ով՝ ում» հարցը հօգուտ սոցիալիզմի և վերացվեց այն խոշոր հակասությունը, որ գոյություն ուներ հանրային սեփականության վրա հիմնված սոցիալիստական արդյունաբերության և մանր գյուղացիական մասնավոր տնտեսությունների միջև։

Սոցիալիստական շինարարության տարիներին արմատապես վերափոխվեց մեր երկրի գյուղացիությունը։ Կոլտնտեսային կարգի ամրապնդման և կոլտնտեսականների եկամուտների ավելացման զուգընթաց խոշոր փոփոխություններ տեղի ունեցան գյուղի կուլտուր-կենցաղային պայմաններում։ Եվ դա բնական է։ Արտադրական հարաբերությունների բնագավառում բանվոր դասակարգի և գյուղացիության միջև եղած տարբերությունների աստիճանական վերացման հետևանքով կվերանան նաև նրանց կենցաղի, կուլտուրայի, գիտակցության մակարդակների միջև եղած տարբերությունները։

Կոլտնտեսային կարգի հաղթանակին և ամրապնդմանը զուգընթաց գյուղում տեղի ունեցավ իսկական կուլտուրական հեղափոխություն։ Մշակելով մանր գյուղացիական տնտեսությունների կոոպերացման պլանը, Լենինը մեծ տեղ էր հատկացնում գյուղացիության կուլտուրական մակարդակի բարձրացմանը։ «Լրիվ կոոպերացումն անհնար է,— գրում էր նա,— առանց մի ամբողջ կուլտուրական հեղափոխության»[11]։ Կուսակցության և կառավարության ամենօրյա հոգատարությամբ մեր երկիրը ծածկվեց անգրագիտության վերացման կայանների, դպրոցների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների խիտ ցանցով և սեղմ ժամկետում այն դարձավ համատարած գրագիտության, զարգացած կուլտուրայի երկիր։ Այժմ գյուղում աճում է միջնակարգ կամ ութամյա կրթությամբ բարձր կուլտուրայի տեր, նոր տիպի գյուղացիություն։

Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղի սոցիալիստական վերակառուցման ՍՍՀՄ-ի պատմական փորձը խոշոր ներդրում էր կոմունիստական շինարարության տեսության և պրակտիկայի մեջ։ Լենինի մեծագույն ծառայությունն այն էր, որ ցույց տալով գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղիները, գրանով իսկ վերջնականապես

---

10 ՍՄԿԿ Մրագիր, Երևան, 1961, էջ 15։
11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 565։

ջախջախեց մարքսիզմի հակառակորդների այն թյուր տեսակետները, որ իրր գյուղացուն խորթ են սոցիալիզմի գաղափարները։ Կոլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ մեր երկրում, առաջին անգամ պատմության մեջ վերացվեց մանր արտադրողների շահագործումը։ Գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակման բնագավառում ԱՍՀՄ ժողովուրդների բազմահարուստ փորձը վիթխարի միջազգային նշանակություն ունի. այն լայնորեն օգտագործվում է սոցիալիզմի և անկախության ուղին թևակոխած մյուս ժողովուրդների կողմից։

ЛЕНИН И РЕШЕНИЕ АГРАРНОГО ВОПРОСА

Г. М. ГЕГАМЯН

Резюме

Исходя из особенностей развития России с самого начала своей революционной деятельности, В. И. Ленин уделял особое внимание вопросу союзников пролетариата в грядущей революции. Ленинская аграрная программа большевистской партии привлекла на сторону пролетарской революции многомиллионную армию крестьян. Победившая революция тут же решила земельный вопрос в пользу трудового крестьянства. В союзе рабочего класса и крестьянства Ленин видел высший принцип диктатуры пролетариата. В кооперативном плане важное место уделяется созданию машинной базы сельского хозяйства и социалистическому перевоспитанию крестьян. Благодаря претворению ленинского кооперативного плана в жизнь извечный крестьянский вопрос нашел свое разрешение. Опыт социалистической реконструкции сельского хозяйства в СССР имеет важное международное значение.